ԼՂՀ ՆԱԽԱԳԱՀ ԲԱԿՈ ՍԱՀԱԿՅԱՆԻ ԽՈՍՔԸ՝ ԱՐՏԱՍԱՆՎԱԾ Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԾՆՆԴՅԱՆ 60-ԱՄՅԱԿԻ ԵՒ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ 12-ՏԱՐԵԴԱՐՁԻ ԱՌԻԹՈՎ ԱԼ. ՍՊԵՆԴԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՕՊԵՐԱՅԻ ԵՒ ԲԱԼԵՏԻ ԹԱՏՐՈՆՈՒՄ

(4 նոյեմբերի, 2011 թ.)

Հայաստանի Հանրապետության մեծարգո Նախագահ,

Վեհափառ Տեր,

Հարգելի ներկաներ,

Ես անչափ ուրախ եմ, որ առիթ ունեմ մասնակցել Ամենայն հայոց կաթողիկոսի ծննդյան 60-ամյակին եւ գահակալության 12-րդ տարեդարձին նվիրված այս հանդիսավոր միջոցառմանը: Մեծագույն գոհունակությամբ ուզում եմ հաղորդել Արցախի ժողովրդի, իշխանությունների եւ անձամբ իմ ջերմ շնորհավորանքներն ու բարեմաղթանքները՝ այս հիշարժան տարեդարձերի կապակցությամբ:

Հոբելյանը լավ առիթ է՝ արժեւորելու մարդու անցած ուղին, գնահատելու նրա գործն ու տեղը այս կյանքում: Հատկապես, երբ խոսքը մի այնպիսի անհատականության մասին է, ինչպիսին Վեհափառ Հայրապետն է:

Ծփվելով Գարեգին Երկրորդի հետ՝ ունենում ես երկակի զգացմունքներ: Մի կողմից, անմիջապես զգում ես նրա խորը հավատքը, անձնվեր հայրենասիրությունը, լայն աշխարհայացքը, անսպառ եռանդը եւ ռեալ պատկերացումները անցյալի, ներկայի ու ապագայի մասին: Մյուս կողմից, շփման մեջ նա չափազանց հասարակ մի անձնավորություն է:

Սրանք այն հատկանիշներն են, որոնք բնորոշ են հեղինակավոր կրոնական ու հասարակական գործիչներին եւ որոնք չէին կարող իրենց ազդեցությունը չունենալ կաթողիկոսի գործունեության վրա:

Գարեգին Երկրորդի գահակալության այս 12 տարիների ընթացքում նշանակալի աշխատանք է կատարվել՝ ուղղված Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու զորացմանը, ժողովուրդ-պետություն-եկեղեցի փոխհարաբերությունների ամրապնդմանը, միջեկեղեցական փոխգործակցության խորացմանը, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի շենացմանն ու բարգավաճմանը: Հատկապես անգնահատելի է նրա ավանդը Հայաստան-

Արցախ-Սփյուռք կապերի շարունակական սերտացման գործում: Արցախում այս ամենը միշտ հիշում եւ բարձր ենք գնահատում:

Վեհափառ Տեր,

Եվս մեկ անգամ շնորհավորում եմ Ձեզ եւ մաղթում արեւշատություն, խաղաղություն, քաջառողջություն ու ամենայն բարիք՝ ի փառս համայն հայության, մեր եկեղեցու եւ հայրենիքի լուսավոր ապագայի: Վստահ եղեք, որ ի դեմս Արցախի ժողովրդի Դուք ունեք Հայ Առաքելական Եկեղեցու զավակներ, ովքեր կրել, կրում եւ այսուհետ էլ պատվով կկրեն հավատքի իրենց խաչը: